<u>Ուղղված է՝</u>

ՀՀ տարածքում գործող բոլոր

- *Բանկերին*
- *Վարկային կազմակերպություններին*
- *Գրավատներին*

<u>Առարկան՝</u> «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում և դրանից բխող իրավական ակտերում կատարված փոփոխությունների վերաբերյալ

Հարգելի գործընկերներ

Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքների շրջանակում **«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում** (այսուհետ՝ Օրենք) և դրանից բխող իրավական ակտերում իրականացվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ:

Այսպես՝

- ս/թ **հուլիսի 11-ից** ուժի մեջ է մտել այն դրույթը, որով Օրենքը տարածվում է մինչև տասնհինգ միլիոն ՀՀ դրամով կրեդիտների վրա,
- ս/թ **օգոստոսի 10-ից** ուժի մեջ են մտնելու Օրենքի այն դրույթները, որով օրենքի կարգավորումները տարածվում են **մինչև 5.000.000 դրամի չափով** (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված **գյուղատնտեսական նշանակության** և **«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով** (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված կրեդիտների վրա, ինչպես նաև **հաղորդակցման և կրեդիտավորողի՝ սպառողի նկատմամբ պատասխանատվության** վերաբերյալ դրույթները:

Ինչպես գիտեք, ենթաօրենսդրական ակտերում ևս կատարվել են մի շարք լրացումներ և փոփոխություններ:

Այսպես՝

- ս/թ **օգոստոսի 16-ից** ուժի մեջ է մտնելու **«Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» Կանոնակարգ 8/05-ի փոփոխությունները,** որոնք վերաբերում են սպառողների հետ անհատական հաղորդակցմանը և տեղեկությունների տրամադրմանը,

- ս/թ **օգոստոսի 30-ից** ուժի մեջ է մտնելու **«Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» Կանոնակարգ 8/03**-ի նոր՝ վերախմբագրված տարբերակը, որը վերաբերում է տեղեկությունների հրապարակման ընդհանուր կանոններին:

Հաշվի առնելով վերը նշված փոփոխությունները՝ անհրաժեշտ է ապահովել՝

- ինտերնետային կայքերով, գովազդի և այլ տեղեկատվական ուղիներով հրապարակվող տեղեկատվության, ինչպես նաև
- մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կնքման, գործողության ընթացքում և պայմանագրի ավարտին տրամադրվող տեղեկատվության նկատմամբ սահմանված սկզբունքների և պահանջների կատարումը:

Անհրաժեշտ է նաև Ձեր բիզնես գործընթացները և ներքին իրավական ակտերը **համապատասխանեցնել** նոր փոփոխություններին, իսկ այն դրույթների կատարման նկատմամբ, որոնք արդեն ուժի մեջ են մտել, Կենտրոնական բանկն իրականացնելու է **վերահսկողական միջոցառումներ՝** դրանց պատշաճ կիրարկումն ապահովելու նպատակով:

Սպառողների շահերի պաշտպանության և
ֆինանսական կրթման կենտրոնի ղեկավար՝ Արմենուհի Մկրտչյան

Սույն գրության հետ կապված հարցերի դեպքում դիմել՝ Անժելա Ավետիսյանին
Հեռախոս՝ 010 592 714